



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ
ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԸ
2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ

ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Տեղեկագրի ծածկագիրը՝ 5100-201

ԵՐԵՎԱՆ - 2017

Տեղեկատվության բազմազանամբ և տեղեկատվական հոսքերի ինտենսիվացմամբ բնութագրվող արդի աշխարհում էապես կարևորվում է «վիճակագրական եռանկյունու անկյունները զբաղեցնող», տարաբևեռ հակումներ ունեցող, պաշտոնական վիճակագրության երեք մասնակիցների՝ ռեսպոնդենտների, սպառողների և հարկատուների հնարավորին «մեկտեղումը», հատկապես՝ ազգային և միջազգային չափանիշներով պերցեպցիայի (կոմունիկացիոն ունակությունների համահարթեցման) պահանջների տեսանկյունով:

ՀՀ ԱՎԾ-ն շնորհակալություն է հայտնում բոլոր ռեսպոնդենտներին (տեղեկատվություն տրամադրողներին), որոնց կողմից տրամադրված տեղեկատվության վրա է խարսխված սույն վիճակագրական հրապարակումը և ողջունում է նրանց ու հարկատուներին, որպես վիճակագրական տեղեկատվության սպառողների, արձագանքներն ու առաջարկները վերոհիշյալ նկատառումներով վիճակագրական հրապարակումների հետագա կատարելագործման համար:

Հրապարակումների հետագա կատարելագործման համար առաջարկությունները և մեկնաբանությունները խնդրում ենք ներկայացնել ՀՀ ԱՎԾ աշխատակազմի վիճակագրական տեղեկատվության տարածման և հասարակայնության հետ կապերի բաժին:

0010, Երևան, Հանրապետության պողոտա, Կառավարական տուն, 3

Հեռ. (+374 11) 52-33-56

Ֆաքս (+374 11) 52-19-21

Էլեկտրոնային փոստ՝ info@armstat.am

ՀՀ ԱՎԾ կայքէջ՝ <http://www.armstat.am>, հայելային կայքէջ՝ <http://www.armstat.info>

<http://www.armstatbank.am>, <http://www.armdevinfo.am>

Ընթերցողի ուղեցույց

Վիճակագրական տեղեկագրում բերված վարչատարածքային բաժանման հիմք են հանդիսացել «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին», «ՀՀ վարչատարածքային բաժանման մասին» ՀՀ օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքները, որոնց համաձայն ՀՀ տարածքը բաժանվում է 10 մարզերի և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի (Երևանի համայնքը 12 վարչական շրջաններով):

Վիճակագրական տեղեկագրում բերված բնակչության թվաքանակի վերաբերյալ տվյալները ներկայացված են քաղաք, գյուղ կտրվածքով ըստ.

- մարզերի
- տարածաշրջանների (նախկին վարչական շրջաններ)
- մարզկենտրոնների
- տարածաշրջանային կենտրոնների

Վիճակագրական տեղեկագրի **հավելվածում** ներկայացված են մշտական բնակչության թվաքանակի ստացման սկզբնաղբյուրն ու դրանց արդիականացման վերաբերյալ մեթոդաբանական պարզաբանումներ:

Պայմանական նշաններ.

- երևույթը բացակայում է

0.0 ցուցանիշը փոքր է չափման միավորից